



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

<< 03 >> Կայծեր 2014թ. N 330-Ղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N1111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Զրային օրենսգրքի 92-րդ հոդվածի  
և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի  
N1111-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N1237-Ն որոշման 1-ին կետով  
հաստատված կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝
  - 1) ջրօգտագործման թույլտվություններում փոփոխություններ կատարելու ծանուցման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
  - 2) Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում գոյություն ունեցող ջրօգտագործողների (այսուհետ՝ ջրօգտագործող) ջրօգտագործման թույլտվություններում (ջրօգտագործման թույլտվություն) ջրօգտագործման ծավալների և/կամ ռեժիմների կրճատման սահմանափակումներ և չափավորումներ կատարելու նպատակով ջրօգտագործման թույլտվությունների մեջ փոփոխությունների և լրացումների օրինակելի ձևը՝ համաձայն N2 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել ջրօգտագործողների ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալների և/կամ ռեժիմների կրճատման սահմանափակումներ և չափավորումներ կատարելու վերաբերյալ պատշաճ և ժամանակին ծանուցումները:
3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետին՝
  - 1) Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում ջրօգտագործողների ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալների և/կամ ռեժիմների կրճատման սահմանափակումներ

և չափավորումներ կատարելու նպատակով ներկայացնել առաջարկություններ՝ հիմք ընդունելով հետևյալ դրույթները, սկզբունքներն ու չափանիշները.

ա. «<Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների և առաջնահերթությունների պահպանում,

բ. 2014 թվականի 1-ին կիսամյակում բնօգտագործման վճարների հաշվետվություններով ձևավորված փաստացի ջրառի և ջրօգտագործման թույլտվություններով տրված կիսամյակային ջրաքանակի տարբերությունը,

գ. ջրօգտագործողների մոտ արդիական տեխնոլոգիաների կիրառման և ներդրման առկայությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ-ի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն,

դ. միավոր արտադրանքի ճյուղային նորմատիվային ջրապահանջի համար պրակտիկայում ընդունված անհրաժեշտ ջրաքանակը,

ե. գործող ջրօգտագործման թույլտվություններում ամրագրված պայմանների կատարումը:

2) ջրօգտագործման թույլտվությունները ծանուցմամբ ամրագրված ժամկետներում ներկայացվելու դեպքում ապահովել ջրօգտագործման թույլտվություններում համապատասխան փոփոխությունների կատարումը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

3) սույն հրամանի 1-ին կետով սահմանված կարգով ծանուցված ջրօգտագործողների կողմից ծանուցմամբ սահմանված պահանջները և ժամկետները խախտելու դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ համապատասխան ջրօգտագործողի ջրօգտագործման թույլտվությունը կասեցնելու վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 34-րդ հոդվածին համապատասխան:

4) ջրօգտագործման թույլտվություններում փոփոխությունները կատարել սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելվածին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետին և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «<Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ջրօգտագործման թույլտվություններում կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել ջրօգտագործողի կողմից ջրօգտագործման փոփոխված ծավալների և ռեժիմների փաստագրման և համապատասխան սարքավորումների կապարակնքման աշխատանքները:

5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետին՝ վերահսկողություն իրականացնել ջրօգտագործողների կողմից սույն հրամանով նախատեսված սահմանափակումների և չափավորումների, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների կասեցման պահանջների կատարման նկատմամբ: